Մայրավանք

Մայրավանքը գտնվում է Կոտայքի մարզի Սոլակ գյուղի մոտակայքում:
Համալիրի մայր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը, կառուցված է 11-րդ դարում սրբատաշ բազալտից: Այն ներկայացնում է գմբեթավոր դահլիճ՝ խորանի երկու կողմերում երկհարկ ավանդատներով: Բեմի վեմքարի տեղ խաչքար է դրված: Եկեղեցու հարավարևմտյան և հյուսիսային կողմերում միաբանության շենքերի ավերակներն են: Ներսում, սեղանի վրա թողնված է հայկական արձանագրություն:
Մայրավանքը հիշատակվում է VII դարից՝ կապված վանահայր Հովհան Մայրավանեցու (Մայրագոմեցի) անվան հետ: 633թ. Կարինի ժողովի ժամանակ Եզր կաթողիկոսը ստիպողաբար ընդունել էր միակամության գաղափարը: Բայց միակամությունը Հայաստանում չի արմատավորվել և համարվել է քաղկեդոնականություն: Կաթողիկոսի դեմ ժամանակի հայ աստվածաբաններից միայն Հովհան Մայրավանեցին է բացահայտ հանդես եկել: Եզր Ա Փառաժնակերցի կաթողիկոսը միակամության հարցում իրեն ընդդիմացած և Մայրավանք քշված Հովհան Մայրավանեցուն անարգելու նպատակով վանքն անվանել է «Մայրագոմ», իսկ Հովհանին՝ «Մայրագոմեցի»: